ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

HSBC

HSBC Բանկ Հայաստանը Ձեզ է ներկայացնում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոցում գտնվող «Տիգրան Մեծ» բազմաբնակարան համալիրում բնակարանի ձեռք բերման հիփոթեքային վարկի հատուկ առաջարկ:

Բնակելի համալիրի մասին

Բնակելի համալիրը գտնվում է Երևան Պարկի մոտ, միևնույն ժամանակ՝ քաղաքային աղմուկից հեռու: Համալիրի կառուցապատման հիմքում դրված են այնպիսի կարևոր արժեքներ, ինչպիսիք են՝ ընտանիք, հանգիստ, անձնական տարածք, ժամանց և հարմարավետություն: Համալիրն ունի 8000 քմ կանաչապատ տարածք՝ հագեցած հետևյալ հարմարություններով.

- ստորգետնյա ավտոկայանատեղի,
- բաց պատշգամբներ բոլոր բնակարաններում,
- խաղահրապարակներ,
- բասկետբոլի և ֆուտբոլի դաշտեր,
- բացօթյա լողավազան,
- լանդշաֆտային ծառեր և շատրվաններ,
- ֆիթնես սրահ,
- անվճար լաունջ և բիզնես լաունջ,
- հանդիպման սենյակներ,
- անվճար WiFi հանդիպման սենյակներում,
- նախասրահ և ռեստորաններ,
- ձայնային և ջերմային մեկուսացում,
- հակահրդեհային համակարգ,
- շուրջօրյա անվտանգության ծառայություն:

Վարկավորման հիմնական պայմաններ

Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տարեկան անվանական տոկոսադրույք	12.5%	9%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	13.48% - 16.86%	9.63% – 13.30%[1]
Վարկի գումար[2]	5 մլն - 200 մլն ՀՀ դրամ	10.000 - 400.000 ԱՄՆ դոլար
Վարկի ժամկետ[3]	24 - 240 ամիս	24 - 240 ամիս
Վարկ/գրավ հարաբերակցություն[4]	Գույքի արժեքի մինչև 90%	Գույքի արժեքի մինչև 70%
Կանխավճար	Սկսած 10%-ից	Սկսած 30%-ից
Վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 1% (0,5% PLUS/STATUS հաճախորդների համար), առավելագույնը 200.000 ՀՀ դրամ	
Վարկի սպասարկման վճար	**Չի կիրառվում**	**Չի կիրառվում**

ՀՀ դրամով վարկերի անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքին գումարելով հաստատուն մարժա և տվյալ պահին կազմում է՝

9% + 3.5% = **12.5%,**

որտեղ՝

9%-ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է,
3.5%-ը՝ Բանկի հաստատուն մարժան:

ԱՄՆ դոլարով վարկերի անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է՝ Բանկի՝ ԱՄՆ դոլարով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքին գումարելով հաստատուն մարժա և տվյալ պահին կազմում է՝

3.2% + 5.8% = **9%,**

որտեղ՝

3.2%-ը Բանկի՝ ԱՄՆ դոլարով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է,
5.8%-ը՝ ԱՄՆ դոլարով ձեռքբերման վարկերի համար հաստատուն մարժան:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարկի անվանական տոկոսադրույքը լողացող է և կարող է փոփոխվել մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի (ՄՀՏ) փոփոխության դեպքում, ոչ ավել, քան տարին երկու անգամ: Լողացող անվանական տոկոսադրույքը չի կարող փոփոխվել ավելի քան 7 տոկոսային կետով վարկի գործողության ամբողջ ընթացքում՝ անկախ տոկոսադրույքի հաշվարկման հիմքում դրված ցուցանիշների փոփոխության չափից: Նախատեսված առավելագույն/նվազագույն շեմը սահմանվում է վարկի անվանական տոկոսադրույքի նկատմամբ:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են տարեկան անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

---

[1] Փաստացի տոկոսադրույքը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով 2023թ. օգոստոսի 8-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքը: Ընդ որում տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:
[2] Վարկի գումարի չափը կախված է նաև Բանկի կողմից սահմանված՝ վարկառուի ունեցած վարկերի գծով մարումների և եկամտի հարաբերակցությունից:
[3] **Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:**
[4] Կախված է տարբեր գործոններից, այդ թվում՝ գույքի գտնվելու վայրից (Երևանում/Երևանից դուրս), լրացուցիչ գրավի առկայությունից (գույք, գնման իրավունք և դրամական միջոցներ) և այլն:

ԱՄՆ դոլարով վարկի դիմելիս անհրաժեշտ է ընդունել կշռադատված որոշում, քանզի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ փաստացի մարվող գումարների և Ձեր վարկային պարտավորությունների մեծության վրա:

ՀՀ դրամով հիփոթեքային վարկի տրամադրման և սպասարկման ընդհանուր պայմաններին և կարևոր այլ բացահայտումներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.hsbc.am/pdfs/mortgages/residential-property-purchase-loan-amd/:

ԱՄՆ դոլարով հիփոթեքային վարկի տրամադրման և սպասարկման ընդհանուր պայմաններին և կարևոր այլ բացահայտումներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.hsbc.am/pdfs/mortgages/residential-property-purchase-loan-usd/:

Գործող պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով կարող եք այցելել նաև Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել +374 60 655 000 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: